



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական նյութ ՇԻԴ 1199/հդ/14թ.
Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան
Դատավորներ՝ Լ.Ավանեսյան
Հ.Գրիգորյան

Քաղաքացիական նյութ ՇԻԴ 199/հդ/14թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

4-ին օգոստոսի 2014թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը՝ (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ա.Աբրահամյանի
դատավորներ՝ Գ.Գրիգորյանի
Գ.Արզումանյանի

քննարկելով Էլմիրա Ռաֆիկի Դանիելյանի ընդդեմ Մարինե Սուրենի Խաչատրյանի՝ 4.850.000 /չորս միլիոն ութ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին հայցադիմումի շուրջ հավաքված քաղաքացիական նյութով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014թ. հուլիսի 7-ի որոշման դեմ հայցվոր Էլմիրա Ռաֆիկի Դանիելյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ հայցվոր Է.Դանիելյանը խնդրել է Մ.Խաչատրյանից հօգուտ իրեն բռնագանձել 4.850.000 /չորս միլիոն ութ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Միաժամանակ Է.Դանիելյանը միջնորդել է հետաձգել ներկայացվող հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի վճարման ժամկետը, մինչև

գործով վճիռ կայացնելը՝ պատճառաբանելով, որ գտնվում է դժվար նյութական կացության մեջ, միայնակ մայր է, խնամքին ունի անչափահաս դուստր, իսկ վճարվելիք պետական տուրքի գումարն ավելի քան երկու անգամ գերազանցում է իր աշխատավարձը, որը կազմում է 59.000 /հիսունինը հազար/ ՀՀ դրամ:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը /այսուհետ՝ նաև Դատարան/ 2014թ. հունիսի 16-ի՝ պետական տուրքի ժամկետը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին որոշմամբ, Է. Դանիելյանի միջնորդությունը մերժել է և հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ՝ վերադարձրել Է. Դանիելյանի հայցադիմումը՝ թերությունները վերացնելու համար:

Է. Դանիելյանի վերաքննիչ բողոքի հիման վրա ԼՂՀ վերաքննիչ դատարանը, վերանայելով Դատարանի 2014թ. հունիսի 16-ի՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը, 2014թ. հուլիսի 7-ի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ Դատարանի վերանայվող որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014թ. հուլիսի 7-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել Է.Դանիելյանը:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերողը գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ Սահմանադրության 44-րդ, 45-րդ և 109-րդ հոդվածները, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի առաջին մասի, 82-րդ հոդվածի առաջին մասի հինգերորդ կետի, նույն հոդվածի չորրորդ մասի, 231-րդ հոդվածի երկրորդ մասի պահանջները, ԼՂՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել և կիրառել «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 21-րդ հոդվածը.

Նշված պնդումները բողոքաբերը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Բողոք բերող անձը պնդում է, որ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը բողոքարկման ենթակա է անկախ այն հանգամանքից, թե ինչ հիմքով կամ հիմքերով է այն վերադարձվել: Ուստի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ հայցադիմումը վերադարձնելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել առանց բացառությունների, իսկ ԼՂՀ վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնա բողոքարկվող որոշման իրավաչափության հարցին:

Մինչդեռ, սույն նյութերով, ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշումից հետևում է, որ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին Դատարանի որոշումը բողոքարկման ենթակա չէ, իսկ քանի որ այն դրված է հայցային դիմումը վերադարձնելու մասին որոշման հիմքում, ուստի վերադարձնելու մասին որոշումը հիմնավոր է: Բողոքաբերը գտնում է, որ օրենքի նման սխալ մեկնաբանումը

հակասում է եռաստիճան դատական պաշտպանության սկզբունքներին և խախտում է անձի դատական պաշտպանության իրավունքը:

Բողոքաբերը գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանը չի քննարկել վերաքննիչ բողոքի հիմքերը, արձանագրելով, որ վերադաս դատարանը չի կարող կրկին քննարկել պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդության հիմքում դրված փաստարկները: Ըստ բողոք բերողի՝ դրանով իսկ ԼՂՀ վերաքննիչ դատարանը խախտել է արդար դատաքննության, եռաստիճան դատական համակարգի պայմաններում դատական պաշտպանությամբ օգտվելու իրավունքը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը, առանց առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման, համարել է, որ հայցվորի դատական պաշտպանության իրավունքը չի խախտվել, նշելով թերությունները վերացնելու համար ժամկետի նախատեսելը, պատշաճ չգնահատելով իր /բողոքաբերի/ գույքային դրության մասին վկայող ապացույցները:

Բողոք բերողը պնդում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատման չի արժանացրել իր գույքային դրության վերաբերյալ ներկայացրած փաստաթղթերը և կատարել է սխալ եզրահանգում, դրանով իսկ խախտելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը:

Ըստ բողոքաբերի՝ Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմամբ չի գնահատել իր գույքային դրությանը վերաբերող ապացույցները, իր եզրահանգումը հիմնավորել է 2011թ. 4.850.000 /չորս միլիոն ութ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ փոխառություն տալու փաստով:

Բողոք բերող անձը միաժամանակ նշել է, որ վճռաբեկ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, որ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որը զրկել է իրեն դատական պաշտպանության իրավունքից և առաջացրել է ծանր հետևանքներ:

Խնդրում է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ և կայացնել նոր դատական ակտ:

3. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Պետական տուրքի գծով արտոնությունները, այդ թվում՝ դրա տարածամկետումը կամ վճարման հետաձգումը նպատակ են հետապնդում վերացնել արդարադատության մատչելիության այնպիսի խոչընդոտները, որոնք պայմանավորում են անձի մոտ համապատասխան միջոցների բացակայության պատճառով դատարան դիմելու անհնարինությունը: Այդ նպատակից ելնելով, օրենսդիրը դատարանի համար սահմանել է առավել լայն հայեցողական լիազորություն՝ պետական տուրքի վճարումը տարածամկետելու կամ հետաձգելու հարցում:

Վերջինս պայմանավորված է դատարանի դերով՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի, որը միաժամանակ պետք է ապահովի անձի արդարադատության մատչելիության իրավունքը:

Սույն նյութով Դատարանը որոշման հիմքում դրել է հետևյալը. Է.Դանիելյանն իր միջնորդությունը հիմնավորել է նրանով, որ միայնակ մայր է, գտնվում է ֆինանսական դժվարին կացության և վատթար գույքային դրության մեջ՝ աշխատավարձը կազմում է 59.000 /հիսունինը հազար/ ՀՀ դրամ, եկամտահարկի պահումից հետո ստանում է 46.600 /քառասունվեց հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ:

Պետք է արձանագրել, որ աշխատավարձի վերաբերյալ տեղեկանքը բավարար ապացույց չէ վատթար գույքային դրության մասին, մանավանդ այն պայմաններում, երբ անձի աշխատավարձի չափը կազմում է 59.000 /հիսունինը հազար/ ՀՀ դրամ և նրա կողմից տրվում է փոխառության գումար 4.850.000 /չորս միլիոն ութ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ չափով, հետևաբար, Է.Դանիելյանի պատճառաբանություններն անարժանահավատ են և ներկայացված տեղեկանքներն ուղղակիորեն չեն վկայում նրա վատթար գույքային դրության մասին:

Գտնելով, որ Է.Դանիելյանը գույքային դրությունը հիմնավորող պատշաճ ապացույցներ չի ներկայացրել՝ Դատարանը մերժել է միջնորդությունը: ԼՂՀ

վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելիս, գտել է, որ բողոքարկվող որոշումը իրավաչափ է և որ Դատարանը գործի ելքի վրա ազդող դատավարական կամ նյութական իրավունքի որևէ նորմի խախտում թույլ չի տվել:

Սույն նյութի փաստերի համաձայն՝ հայցադիմումին կից միջնորդությամբ Է.Դանիելյանը խնդրել է տարաժամկետել պետական տուրքի վճարումը և այն լուծել վճռով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա միայնակ մայր է, գտնվում է դժվարին ֆինանսական կացության և վատթար գույքային դրության մեջ: Հայցադիմումին անձը կցել է աշխատավարձի չափի մասին տեղեկանք, իր բնակելի տունը «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում գրավադնելու և այն ներկայումս աճուրդային վաճառքի հանելու մասին ծանուցագիրը:

Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանը Դատարանի որոշման իրավաչափությունը ստուգելիս պարտավոր էր պարզել, թե սույն գործով արդյոք Դատարանը առաջնորդվել է անձի արդարադատության մատչելիության ապահովման սկզբունքով և ելել է այդ իրավունքը ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում ապահովելու նպատակից: Այդ հանգամանքը պարտավորեցնում է վերջինիս իր լիազորություններն իրականացնել՝ ելնելով անձի հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման գերակայությունից:

Դատարանի կողմից հայեցողական լիազորությունների վերոնշյալ ձևով իրականացումը պետք է դրսևորվեր՝ հայց ներկայացնելու պահին պետական տուրք վճարելու հնարավորության բացակայությունը հիմնավորող ապացույցները պատշաճ գնահատելով, ինչը չի կատարվել, իսկ ԼՂՀ վերաքննիչ դատարանն առանց վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելու, մերժել է բողոքը:

Գերագույն դատարանը փաստում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշմամբ քաղաքացին զրկվել է արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության սահմանադրական իրավունքից:

Ինչ վերաբերում է պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին Դատարանի որոշման մասին ԼՂՀ վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը, որ «...ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում նման միջանկյալ դատական ակտի վերաքննության կարգով բողոքարկում: Ուստի, օրենքով սահմանված կարգով չվերացված՝ Դատարանի նման որոշման առկայության պայմաններում իրավաչափ չէ կասկածի տակ դնելու ինչպես այդ, այնպես էլ դրա հիման վրա կայացրած մեկ այլ՝ սույն գործով բողոքարկված 2014թ. հունիսի 16-ի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը: Զբողոքարկված և չվերացված նման որոշման առկայության պայմաններում, ԼՂՀ վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ ինչպես հայցադիմումում, այնպես էլ վերաքննիչ բողոքում պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման միջնորդության հիմքում դրված փաստարկները

չեն կարող կրկին քննարկվել, թեկուզ՝ վերադաս դատական աստանի կողմից:»,
այս Գերագույն դատարանը այն գտնում է անհիմն, հետևյալ
պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի առաջին
մասի հինգերորդ կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը,
երբ չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը
հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է
պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու
հնարավորություն՝ բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը կամ նման
միջնորդությունը մերժվել է:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի
երկրորդ մասի համաձայն՝ առաջին աստանի դատարանի՝ գործն ըստ էության
չլուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննվում են
դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ
բողոքների քննության համար նախատեսված կարգով:

Նշված նորմերի մեկնաբանությունից հետևում է, որ այն դեպքերում, երբ
հայցադիմումը վերադարձնելու հիմք է միայն պետական տուրքի վճարումը
հետաձգելու կամ տարածամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ
միջնորդության մերժումը, և այդ որոշման դեմ ներկայացվել է բողոք, այս
վերադաս դատարանի համար բողոքի քննության առարկա պետք է լինի նման
միջնորդության մերժման հետևանքով հայցադիմումի վերադարձը: Հետևաբար, ԼՂՀ
վերաքննիչ դատարանը պետք է քննարկման առարկա դարձնեք ներկայացված
միջնորդության հիմնավորվածությունը, քանի որ տվյալ դեպքում դատարանը չի
կարող հայցադիմումը վերադարձնելու օրինականությունը գնահատել առանց դրա
հիմքը կազմող միջնորդությունը քննարկելու: Այդ դիրքորոշումը բխում է նաև
անձի՝ դատարանի մատչելիության սահմանադրական սկզբունքից, քանի որ
բողոքի՝ միջնորդության հիմնավորվածության մասը քննարկման առարկա
չդարձնելու դեպքում ֆինանսական սահմանափակումների պատճառով անձի՝
դատարան դիմելու իրավունքի ապահովման միջոցները արդյունավետ չեն կարող
համարվել:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ վճարելի բողոքը հիմնավոր
է և ենթակա է բավարարման, իսկ ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է
վերացման՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի
երկրորդ մասի ուժով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական
դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի երկրորդ մասով, 254-րդ-256-րդ
հոդվածներով՝ Գերագույն դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Հայցվոր Էլմիրա Ռաֆիկի Դանիելյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014թ. հունիսի 7-ի որոշումը և վերացնել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը /այսուհետ՝ նաև Դատարանը/ի 2014թ. հունիսի 16-ի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ